ցաք ելանել ընդ ալայի նաւացն, այլ յՕգոստոս ամ-
սոյ Գ Չշի աւուր գնացաք իւրաքանչիւրովք մտանել
ի նաւ, որ կանգնէր հանդէպ Պէշիքտաշոյ և զայն օր
ոչ ել։ Եւ մեք ուրոյն ելեալ ի դուրս ի տուն ծանօթի
մերում որ ի սահմանսն՝ այն գիշեր և Շաբաթի օրս
(4 Օգոստ.) և զային սիրելիք յամենայն կողմանց և զայն
գիշեր ևս աւթեցաք մեծաւ ուրախութեամբ և այ-
գուցն Կիրակի (5 Օգոստ.), որ Բարեկենդան Սուրբ Աս-
տուածածնի, եկին այլ ևս ծանօթք, բարեկամք և
ազգայինք մեծամեծօք և փոքումբք՝ լի ամենայն
բարեօք առ ի խրախութիւն, զի մերթ խնդիւն լինէր
և մերթ լալիւն. և յորժամ հասարակ աւուրն եղեւ,
ելանէր նաւն և մեք հրաւիրեալ ի սիրելեաց գնայաք
մտանէաք ի նաւ. և դեռ ևս արկանիլն զպարանոցաւ
միմեանց և գրկափարիլն ոչ պակասէր և դժրիւ լինէր
քակտումն և բաժանումն յազանց և ի սիրելեաց։ Եւ
յորժամ մտանէաք ի նաւ՝ կային հանդէպ մեր, լա-
լով ողջունէին և հայէին և հեռանայաք. և այլք ի
նոցանէ, յարանց ծնողաց մերոց և ի մերձաւորաց,
յաչ և յահեակ նաւին մեր ըմբռնեալ կային փոքր
նաւովք, մինչ երթայր նաւն մեր բացեալ զառագաստն
աջողակ հողմով. և իբրև հեռանայաք լալով և խըն-
դութեամբ, նոքա անդուստ և մեք ի նաւէն ողջու-
նէաք զմիմեամբք։ Եւ ապաւինեալ յաղօթս նոցա և
ի բարեխօսութիւն ամենասուրբ Կուսի Մօր Տեառն և
ամենայն սրբոց՝ առ յօգնականութիւն մեզ, և երթա-
յաք հասանէաք երեկոյիս ի Սիլիվրի կոչեցեալ տեղին։
Եւ ելեալ անտի ի գիշերի (6 Օգոստ.) Բ-րդ ժամու ա-
ւուրն, արկաք զերկաթն հանդէպ Թէքիրտաղոյ, և
ելեալ անդ երկրպագեցաք Սրբոյ Թադաւորին, որ է
բևեռ տախտակին, զոր եդ Պիղատոս ի վերայ գլխոյ
Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ թէ Այս է Թագա-
ւոր Հրէից, որ է ի ձեռս Հայոց քահանայից, ի մէջ